

ԲԱԺՆԵԳԻՆ
Ի Պոլսկարիս
Տարեկ. 10 ֆր
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 օկնդ
ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՏԱԿԱՆ
Գրութիւնքեա
չեն տրուիր:

Հասցե
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅՍՆԴԵՍ ԱԶԳՍՅՈՒՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Դ ՏԱՐԻ

ՅՈՒՆՎ. 6 ՇԱԲԱԹ 1901

ԹԻԻ 194

1907 ԴԱՐՈՒ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԸ

(Շար. եւ պերջ)

Մեծ ամուլը կրթական գոռ ու գոչին իր քսան երեսուն տարիներու հասունութեան մէջ երբեք չը տուաւ մեզի պտուղ մը, որ անուշցներ մեր քիմքը ու դեղձափն ըլլար խել մը արմատացած մարտնչութիւններու, որոնք ալ սկսած էին սոսկալի թափով մը փճացնել մեր էն աղնիւ ու էն կարեւոր ձիւրքերը:

Վաճառականը ծալլուած մնաց «Ես»-ի պղծտիկ աշխարհին մէջ, ուր ամենէն ողբալի յետադիմութիւնն ունեցաւ հակառակ այն անհատական առաւելութիւններուն, որով փայլած էր ինք ամեն ժամանակ, գրեթէ նախապատմական օրերէ ի վեր: Երբեք չը ճանչցաւ ժամանակը անոր հոտանքը ու անոր պահանջները. հաւաքական ուժերու կարեւորութիւնը անտեսեց և ինք՝ որ կոչուին ունէր մասնաւորապէս թուրքիոյ տնտեսական կացութիւնը յեղաշրջելու, երբեք չը մըտածեց ընկերութիւններ կազմելով, երկիրը և կամ երկրէն աւելի հայ տարրը օժտել վաճառականական պատկառելի քանակով մը. ընդհակառակը բոլոր կազմուած ընկերութիւնները եղան աղտոյի որչը այն սպառնչ միքրոպներու որոնք գոյութիւն անունով կտրակուին բարոյական աշխարհի մէջ: Յոռի կրթութեան մը շնորհիւ իսկապէս տգէտ, բայց երեւութապէս ամենին իր կարգին մէջմէկ նշանաւոր տնտեսագէտ դարձած, ընկերութիւններու մէջ — եթէ երբեք եղան — փոխանակ առողջ մտածումներով անոնց տեականութիւնը ապահովելու, սկսեցին Փրանսէի մը յատուկ ճիւղնութեամբ ընկեր ընկերէ

գողնալ ու հետեւաբար դիակնացնել այդ հաւաքական ուժը, որ այլապէս պիտի դառնար մեր փրկիչը՝ անոր խղճամիտ կիրառումովը:

Կղերը՝ որին առաջ սքեմին ծալքերուն մէջ կը պտնուէր մեր սե ճակատագիրը, երբեք չը հասաւ բարձրութեան մը, ուրկէ կարող ըլլար տեսնել իր հօտին ոտքին տակ բացուած գահավէժները և զգուշացնել զանի իր մոգիչ սրինգովը: Նա երգեց այն, և շատ խոկ երգեց... բայց անոր խաղերուն մէջ կային — ականջը խօսի պատուելիներուն — յաճախ ամենէն չորսմարտը՝ Մամոնային ձօնուած, ամենէն պաղատականը՝ Աստղիկին և ամենէն լպիրշը՝ Անեմէ՝ յազրմին, որին անամթ արձագանքը եկան հասան մինչև իսկ երէկուան հերոս թէ հերեսա, յեղափոխան վարդապետէն...

Մեր գրագէտները երբեք չը հասան այն լրջութեան, որ անոնք տոհմային ամեն գէշ երեւոյթ կրնային աննախապաշար մտքով տարրալուծել և յամառ ու համբերատար կռիւով անոնց ջնջումը երաշխաւորել, հոգ չէ տարիներու երկար շարքի մը մէջ: Հոն այդ գրագէտական քուրային մէջ Եսի կրակով չիկացած, պարկեշտութենէ, զօրեղ նկարագրէ ու պաշտօնին խոր գիտակցութենէ զատ ուրիշ բաներ թափուեցան որոց մանրամասնութեան թուումը կը շիկնեցունէ ամեն անոնք որոնք այդ ջոկատին չեն պատկանիր զանցառելի քանակով մը: Պոլսոյ դիակնացած լրագրութենէ դուրս առէք արտասահմանեան հայ լրագրութիւնը առջնիկ ու ամեն մէկը քննեցէք իր Գրական, Ազգային ու Քաղաքական տիտղոսներուն տակ, շատ պղտիկ բացառութեամբ ամենքն ալ անճոռնի ու լղրճակ: Տեղ մը անպաշար մտքերու քաշքշուկները, տեղ մը գարշելի հայհոյութիւններու և կատղած շան լորձունքները, տեղ մը իրերագովութեան լիրբ գար-

պատաները, տեղ մը կապելային գրականութեան մը վիժումները, իսկ ամեն տեղ «ես»-ի կռիւն է որ պիտի տեսնէք անսահման: անվերջ ու լայն-արձակ գիծերու վրայ: Ժողովուրդն ու ժողովուրդին ցաւերը մոռցուած, անոնց վերքերէն հոսող թարախները մի միայն շահագործուեցան մեր գրողներէն, որոնք կրող ըլլալու չափ անտանելի կը դառնան հետզհետէ: . . .

Եւ ինչո՞ւ այսքան աղէտ:

Կ'անդրադառնանք ու կը գամուինք այն միակ պատճառին վրայ, զոր ժողովուրդը անոյց իր ծոցին մէջ 30—40 տարիներէ ի վեր անգիտակցօրէն: Անհիլա՞նոյն իսկ խորթ զաւակ մը չեղաւ իրեն, այլ կատարեալ օձ մը, որ թունաւորեց անոր կեանքը և պարկեշտ, ընդունակ ու ազնիւ համայնքի մը հանրային աղէտը պատարասեց զգալապէս: Սրիկան ծնաւ անկէ, խաչագողը ծնաւ անկէ, հայրենիքը արեան ծով դարձնողը ծնաւ անկէ, պնակալէլը ծնաւ անկէ ու այս ամենուն վրայ մ'ը քթին խնդացող լիրքը ծնաւ անկէ: . . . Դետինն անցնին, մէկէ աւելի ունինք ատոնց նմոյշները նոյն իսկ այն նեղ շրջանակին մէջ, ուր կապրինք:

Տե՛ս ժողովուրդ, թեթեւ կըթուեան մը միքրոպները խնչպէս քու առողջ մարմինդ հիւժախտաւորի մը է՛ն աղէտալի գալուկին մատնեցին, որով մէկ ծայրէն միւսը կը տառապիս այսօր, առանց քու հորիզոնիդ վրայ գիտաւորի մը երևոյթովը միտթարուելու: Վասն զի զեռ այդ սփռն է որ կը կատարուի քու կըթաւկան յարկերուդ տակ, միւսնոյն սրտցաւ մարտիրոսութիւնը: Ուստի արեւնոտ սրտով կըսեմ՝ քեզի՛ ժողովուրդ, թէ քանի խարաղանը չես առնեք ձեռքդ — մամուլէն յոյսդ կտրէ — և դուն անձա՛մբ չես ջախջախեք հոգաբարձու ըսուած չարչիւները իրենց ամենախոր տգիտութեանը մէջ ու չ'ես վնասեր սա միքրոպներու բոյն վարժապետները կըթաւկան դարաստանէն, վստահելի թէ ինչպէս այսօր կողբաս 19րդ դարու վերջին քառորդը, որ այնքան ազիտաբեր եղաւ քեզի, այնպէս և 20րդ դարու առաջին քառորդը պիտի ողբաս աւելի քսամենցուցիչ տեսարաններու բոլոր սարսուռին տակ:

Կ'ուզե՞ս:

ԹՕՏԻՆ

ԹՈՒՐԲԻՈՅ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄԸ

(Տաւաշի բաց նաւակին առիթով)

Քրիստոնեայ աշխարհին առջև՝ մահմետական աշխարհը մնաց անընդունակ քաղաքակրթութեան և առաջդիմութեան, այսինքն, անքաղաքակր-

թելի և յետագիմող: Ղուրանի հանրածանօթ ման կեախորհեռուն տրամադրութիւնը՝ մահմետականները քրիստոնեաներուն հետ մշտական ատելութեան և թշնամութեան մէջ ձգեց, որմէ մահմետական տիրապետութեան գոյութիւնը ենթարկուեցաւ քրիստոնէութեան դատապարտութեանց: Պակայն ատոնք գոյացուցին քրիստոնեայ տէրութեանց մէջ նախանձութիւններ եւ թշնամութիւններ, գլխաւորաբար Ռուսիոյ և Անգլիոյ մէջտեղ, որոնց հակառակութեանը ենթարկուեցաւ վերջապէս մահմետական տիրապետութեան գոյութիւնը՝ որ եկաւ միայն և միմիայն Պաւլոս Երանցի ճովալով:

Ռուսիա ելաւ պաշտպան հանդիսանալ եւ փրկող ներկայանալ մահմետական տիրապետութեան տակ հեծող քրիստոնեաներուն: Թուրքիոյ դէմ Ռուսիա որչափ պատերազմներ որ տարաւ, Անգլիա միշտ այլափոխեց զանոնք: Այսպէս Ռուսիոյ մտաւորութիւնը միշտ կը փաստէր: Անգլիայ թուրքիոյ նպաստող ըլլալով, միշտ կ'օգտուէր թուրքիայէն: Ըսել է թէ Ռուսիա խաբուող եւ Անգլիա շահող կը մնար, որով և բարեբաղդ կըլլային և կը շահէին Ռուսիոյ պաշտպանութիւնը վայելող քրիստոնեաները:

Քրիստոնեաներու պաշտպանութենէն և փրկութենէն ընդհամարուած ռուսական ձգտումները դէպի Միջերկրական և Հնդկական ծովերը՝ որոնք Անգլիոյ շիջերն էին, թուրքիոյ ամբողջութիւնը Անգլիոյ համար կենաց և մահու խնդիր մը ըրին: Պաշտպանութեան և փրկութեան ցանկութիւնը բառնալու կամ ոչնչացնելու ու Անգլիոյ պաշտպանութեանը ենթարկուելու կամ ապաւինելու գիտամբ մեծն Բրիտանիա հրատարակել տուաւ թուրքիոյ հանրածանօթ «Թանգիլ մաթ» կոչուած բարենորոգումները որք անիրագործելի էին արդէն անխաղաքակրթելի և յեռադիւր թուրքիոյ համար: Քրիստոնեաներու «պաշտպանութեան» և «փրկութեան» այստիկ համար կլկեցնել ուղուած ոսկեւոյժ դեղահասկները անզօր մընացին, ուստի, հրատարակուած բարենորոգումներու իրագործութիւնը երբոր պահանջուեցաւ և չկատարուեցաւ, լուծումը ուղուեցաւ միմիայն պատերազմով, ինչ որ դարձեալ այլափոխուեցաւ Անգլիոյ կողմէ և որ այս անգամ, ստիպուեցաւ թուրքիոյ հետ կնքել Կիպրոսի համաձայնութիւնը և անկէ վարպետութեամբ յաջնալ նոյն կողմին: Անգլիա միանգամայն սահմանադժեց Ասիական թուրքիոյ մէջ գտնուող եզրիւնները որոնք պիտի բարենորոգուէին միմիայն իր և թուրքիոյ համաձայնութեամբ և որոնք զերծ պիտի մնային Ռուսիոյ յարձակումներէն որոնց համար Անգլիա չինու զօրութեամբ թուրքիոյ պաշտպան պիտի կանգնէր ըստ վերոյիշեալ համաձայնութեան: Ա-

հա թէ ինչպէս Անգլիա տպահոված եղաւ թուրքիոյ ամբողջութիւնը կամ իւր կենաց և մահու հարցը, սահմանադրելով Ասիական թիւրքիոյ մէջ գտնուող երկիրները որոնք «առանձնապէս» պիտի բարենորոգուէին եթէ երբէք այսպէս կարենաւ ուղղել . . .

Վերջապէս, խոստացուած բաւեցորդութիւնները ըստ կառն իրագործելի մնալով, անքաղաքակրթելի և յետագիւն Օսմանեան Կայսրութիւնը ըստ կառն կը մնար բարենորոգելի: Ո՛րքան Ռուսիա չուզեց, ա՛յնքան Անգլիա ուզեց որ այսպէս ըլլայ: Անգլիոյ ուզածը եղաւ նաեւ թիւրքիոյ ուղածը. երիտասարդ թուրքերու ուղածը կը լլուր երկուքին ալ ուղածը: ամենուն ալ ուղածը միջոց կը մնար անիրագործելի: Եւրոպական տէրութիւններէն հրատարակուած պէսպէսագոյն տետրակները կը պարզէին «տարուած» յաղթանակները: Անգլիոյ տարած յաղթանակները արդէն պարզուած են իւր հրատարակած «կապոյտ» տետրակներուն մէջ՝ *intelligenti pauca* . . .

* * *

ԺԱՄԱՆՑ

Իմ անուանադոճութեան պատճառը

Գիտէ՞ք թէ ինչո՞ւ կնոյժէս բաժնուեցայ: — Ո՛չ: — Է՛հ, ուրեմն պիտի պատմեմ ձեզի:

«Ծնունդի գիշեր մը, ուզելով կինս ուրախացնել, ճաշարանէ մը շքեղ համեմուած հնդկահաւ մը գնեցի: Խանութպանը գեղեցիկ ծրար մը ըրաւ զոր ձեռքս բռնած սկսայ յառաջանալ: Ճամբան բարակ անձրեւ մը ըզգացի, որ հետզհետէ սկսաւ սաստկանալ: Զեռքիս ծրարը սրճարանի մը առջև գտնուած նստարանին վրայ դրի որպէս զի հովանոցս բանամ. հակառակ բոլոր ջանքերուս, հովանոցը կընդգլխանար բացուելու: Վերջապէս բացուեցաւ, ծրարը թեկիս տակը առի ու ճամբաս շարունակեցի զուարթ տրամադրութեան մը տակ, որովհետեւ ուրախութիւն պիտի պատճառէի կնոյս ու զաւկներուս, երբ անոնք խորոված այն պատուական հնդկահաւը տեսնէին:

Բայց երբ ծրարը կնկանս յանձնեցի, մէջէն ինչ ելլայ ազէկ. — Տղայ մը. աղքատի աղտոտ լաճ մը. որ ըսկաւ ճուռ: Մինչև այսօր կեանքիս մէջ այսպէս փոփոխուող բան մը չէի տեսած: Այլ կրնար երեւակայել կնոյս ձգած վայնասունը ու զտակներուս պողպատաւորը:

Անշուշտ ընթերցողը գուշակեց թէ երբ ծրարը օրը

ճարանի նստարանին վրայ դրած հովանոցս բանալու կ'աշխատէի, չարամիտ սրիկայ մը գայն վերցուցած ու տեւը յիշեալ լակոտը դրած էր:

Գառք Բոսթալները

Պանդոկի մէջ բնակող Յեսու անուն անձ մը կը կասկածէր սենեկապետէն որ բոլոր իրեն զրկուած բաժնի—բոսթալները կը կարգայ. ուստի այս բանը ստուգելու համար ինք իր հասցէին հետեւեալ բաժնի—բոսթալ գրեց.

«Սիրելի բարեկամս Յեսու աղա.

«Պէտք է յանդիմանէք անգամ մը ձեր խանին օտապաշին, որովհետեւ այդ անպիտան ու խայտառակ մարդը բոլոր բաժնի—բոսթալներէ կը կարգայ»:

Գոյ

ԽԱՉԻԿ

Իրիկունը երբ Յեսու աղան պանդոկ վերադարձաւ, սենեկապետը չափազանց բարկացած անոր քով վաղեց:

— Զեր խաչիկ բարեկամին ըսէք որ շատ անկիրթ մէկն է. ինչէն կրնայ գիտնալ թէ ես ձեր բաժնիները կը կարգամ:

— Է դուն ինչպէս գիտես որ ատանկ գրած է, կը պատասխանէ Յեսու աղան:

Ասոր վրայ սենեկապետին բերանը բաց կը մնայ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

Աժանս Բոժոժիկ և Ընկ

Քամիաթքա

Մեր վարժարանայ համար անցեալ օր կառք մը փայտ առնուեցաւ 13 ֆրանքի որ հազիւ երկու օր բաւեց, մինչդեռ նոյն գումարով ամառը ժամանակին երեք կառք փայտ կրնար առնուիլ:

Բոժ.— Օրինակելի տեսեսադ խոութիւն . . .

Նոյն, (այս առաւօտ առնուած)

Ծնունդէն վերջն ալ վարժարանը չը փակելու համար ժամկոչն ու տնտեսը որոշեցին աշակերտներուն ապապրել օր, ըստ թրքական հին դրութեան, առտունները իւրաքանչիւրը իր տունէն մէյմէկ կտոր փայտ թեկին տակը առած գայ վարժարան, որովհետեւ խնամատար խորհուրդը շատ զբաղուած ըլլալով մրմիայն իր . . . անձնական գործերովը, ժամանակին չէր ուզած վառելափայտը ամբարել:

ԳԻՆԵՎԱՃԱՌՆԵՐՈՒ ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆԸ

Անոնք որ Բարիզի և առ հասարակ Ֆրանսայի մէջ պտտած են, զարմանալով դիտած են թէ ամէն քայլափոխի կը հանդիպին գինետուներու և սրճարաններու (որ աւելի քաղաքավար կերպարանքով գինետուն ըսել է)։ Յիրաւի Բարիզ մէջ երբ փողոցէ մը անցնիս ապշած կը տեսնես թէ ինք խանութէ անպատճառ մէկը գինետուն է կամ սրճարան և կամ պրտաւորի որոց մէջ կը ծախուին ամէն տեսակ ոգելից ըմպելիքներ (ալգոօլ), ինչպէս՝ ալիսենթ (սպիտակ և կանաչ), ամէն փիքօն, վէրմութ, մար, քիւրասօ, ռօմ, դօնեաք, քէրշ, օզի, և այլն, և ուր հարկը հազարներով մարդիկ նստած կը խմեն այդ նորեւուկ թոյները և կը հարբենան։ Հետեւեալնք։ — Զանազան տեսակ հիւանդութիւններ՝ ստամոքսի, աղիքներու, միզային խողովակներու, ջգերու, գլխի, մտքի, անհամար են ալգոօլէն խենթեցողները, յանկարծամահ եղողները, անդործութեան և աղքատութեան մատնուողները, ընտանեկան անհամաձայնութիւնները՝ կըռիւնները՝ ոճիրները ևն, մէկ խօսքով ընկերական պատուհանները։ Ասկէ ծագած էր ալգոօլականութեան խնդիրը, ալգոլամարտութիւնը՝ որուն համար հազարաւոր ընկերութիւններ կազմուեցան և կը կազմուին, բայց ի զո՞ւր, վասն զի ալգոօլականութիւնը այն արմատացած ախտերէն է որ գրեթէ միշտ մարդու կեանքով կը վերջանայ։ — Ֆրանսական կառավարութիւնը երկար ժամանակէ ի վեր կը բազէր ընկերային այս սարսափելի պատուհասով, զանազան միջոցներ ձեռք առաւ ալգոօլանութիւնը շնջելու և կամ դոնէ պակսեցնելու համար։ Պատգամաւորներու սենեակը իւր վիճաբանութեանց օրակարգին մէջ անցուցած էր (10-15 տարի ի վեր) ալգոօլի խնդիրը։

Վերջապէս սենեակը և կառավարութիւնը երկէ (դեկտ. 30) իւր վճիռը արձակեց, վճիռ՝ որ բոլոր գինեւաճառներուն կամ ալգոլավաճառներուն մահացու հարուած մը տալու կոչուած է և ասոր համար է որ վայնատունը փրցուցեր են։ Ասկէ ետքը ամէն ալգոօլ գնող, մէկ լիտր (մէկ շիշ) ալգոօլի համար պիտի վճարէ 2 ֆր. 20 սանգրի մոմ տուրք, ըսել է՝ եթէ զօր օրինակ մէկ շիշ դօնեաքը առաջ կարժէր 2 ֆրանք հիմա պիտի արժէ և 4 ֆր. 20 սանգրի մոմ։ Ետեւում մը որ հազին է, Յարգելի գինեպանները ինչ գնով պիտի ծախեն յետ այսու իրենց թոյնը որպէս զի կարենան իրենց առաջուան շահը ունենալ և կամ իրենց յաճախորդներէն շատերը չպիտի կորսնցնեն գիները բարձրացնելով... ահ որ չափ անգութ է կառավարութիւնը...

Կառավարութիւնը ալգոօլի դինը բարձրացնելով կը յուսայ գինին առաջ քշել (լաւ գինին) ալգոօլը պակսեցնել և ալգոօլականներու թիւը նուազեցնել երանի թէ յաջողէր։

Բարիզ

Ս. Դ.

ՀԱՅԵԼԻՆ ԽԱՌՈՒԱԾ

Բարիզի Շօմէնիլ փողոցին մէջ տան մը բռնակիչները անցած գիշեր ունեցան յուղումնք մը, որուն նմանը շատ չը պատահիր։

Ժողէֆ Տամալ տնունով վարձակալ մը, վաճառականութեան ներկայացուցիչ, երեկոյթը բարեկամներուն հետ անցնելէն ետքը, տունը վերադարձաւ կէս գիշերէն ժամ մը ետքը։ Խիստ զուարթ էր, և աստիճանները ցատկաւելով ելաւ մինչև չորրորդ յարկը, ուր կը բնակէր։

Բայց հազիւ դուռը բացաւ, սարսափի աղաղակով ետ քաշուեցաւ։

Դէմ առ դէմ գտնուած էր վայելչապէս հագուած մարդու մը հետ որ իր հայելապահարանը խուզարկելու վրայ էր։

Տալայ իսկոյն դուռը դոցեց և ելլելէն աւելի հապճեպով վար իջաւ՝ տակնուվրայ եղած։ Հոն դռնապանը արթնցուց և եղելութիւնը պատմեց։ Դռնապանը կարծիք յայտնեց որ թերեւս գողը մինակ չէր և խոհեմութիւն պիտի ընէին իրենց օգնական փնտաւելով։ Հետեւեալը, շատ մը վարձակալներ արթնցուցին խնդրելով որ զինուին։ Պահ մը ետքը դարձեալ վեր ելան առաջնորդութեամբ դռնապանին, որ վաղեմի գինուորական մ'էր յաղթանդամ, և որ խումբին առջևէն կը քալէր՝ մէկ ձեռքով մոմ մը բռնած։

Փոքր վարանումէ ետքը, յանկարծ դուռը բացին և դռնապանը ներկայացաւ... բայց ան ալ գէպի ետ ցատկեց, տեսնելով գող մը որ բամպակեայ գտակ մ'ունէր և սուր մը կը ծօծէր...

Մարդերը խորհրդակցեցան։ Գողերը որոնք ապահովապէս գէթ երկու հատ էին՝ չէին կրնար փախչիլ։ Բայց վտանգաւոր էր սնունդ վրայ քալել ճակատ առ ճակատ, և առաջին էր երթալ քաղաքապահներ բերել անոնք միայն իշխանութիւն ունէին գործելու։

Վարձկաններէն մին գնաց և տասը վայրկեան ետքը վերադարձաւ երկու ոստիկանով։ Ներկայը մեծապէս հանդարտեցան համազգեստաւորները տեսնելով։ Խմբակը մէկ կողմ քաշուեցաւ և ոստիկանները դուռը բանալով հրախալկան ձայնով մը պոռագին։

— Յանուն օրինաց անձնատուր եղիք։

Ով զարմանք, իրենց դէմը գտան համազգեստաւոր երկու ոստիկան:

— Զափազանց յանդգնութիւն, գոչեց ոստիկաններէն մին՝ իր նմանին օձիքէն բռնելու համար ձեռքը երկնցնելով: Բայց ձեռքը դպաւցուրտ և սահուն մակերեղծի մը...

— Հայելի՛ է, մըմնջեց, ապուշ ապուշ:

Արդարեւ հայելի մ'էր, պահարանին հայելին, որուն դուռը կ'ստաբաց ձգած էր Ժողէֆ Տավալ: Դուռը բացուած էր և մուտքին դիմացը կը գտնուէր, այնպէս որ ամեն ներս մտնողը ինքզինքը կը տեսնէր: Դռնապանի և ոստիկանի կերպարանափոխութեան գաղտնիքը հոն էր:

— Եւ խորհիլ որ տմենքնիս ալ գող կարծուեցանք, գոչեց Տավալ:

ԱԺԱՆ ԿՕՇԻԿ

Երեսուն տարեկան ֆրանսացի ուսանող մը Բարիզի էքզիպիցիոնի մէջ մէկ օրուան համար աժտն սենեակ մը կը վարձէ: Նոյն օրը կօշկակար մը կուգայ ուսանողին սենեակը, բերելով անոր ապսպրած զոյգ մը կոշիկը: Ուսանողը, կօշիկները փորձելով, շատ դժգոհ կ'երևի: Կըսէ թէ ձախ ոտքը սոսկալի կերպով կը ցալի: Կօշկակարը կը խոստանայ անմիջապէս խափնութ երթալ, կօշիկը քիչ մը բանալ և բերել: Միւս կօշիկը, յարմարած ըլլալուն համար, հոն կը մնայ: Կօշկակարին մեկնելէն քիչ մը ետքն ուրիշ... կօշկակար մը կուգայ, ապսպրուած զոյգ մը կօշիկն ի ձեռին: Բայց ուսանողն հազիւ թէ կօշիկն աջ ոտքն անցուցած էր, կսկսի պոռալ կանչել: Կօշկակարը, պզտիկ մնալով, կը խոստանայ խափնութ երթալ և կաղապարի քաշելով շուտով մը առնել բերել: Կէս ժամ ետքը, երկու կօշկակարներ կը տնկուին հնարադէտ ուսանողին սենեակին առջև, ձեռքերնին մէկ մէկ կօշիկ բռնած: Ուսանողն իր գործը աեսած ըլլալով առած քալած էր:

ԲԱՍԵՐՈՒ ՆՈՐ ՄԱՀՄԱՆՆԵՐ

Յանցանք. — Դիտակին հակառակ կողմէն զիտուած առարկայ մը որ դիտողին անձէն միշտ հեռուն կը տեսնուի:

Բարի. — Անդէմ բայ մը:

Զար. — Աշխարհի էն աժան ապրանքը:

Երաշխանորութիւն. — Անպարտ պարտապանութիւն:

Ամուսնութիւն. — Անբարոյութեան դեղ-թափը:

Բարկութիւն. — Անկրակ հրդեհ:

Իմաստակ. — Փառքի մուրացկան:

Շուկայ. — Պատուաւոր աւաղակներու վայր:

Բաժակ. — Բարեմաղթութեան բանալին:

Տգեղութիւն. — Բառ մը որ մեր «գեղեցիկ» կոչուած սեռէն և ոչ մէկուն բառարանին մէջ գոյութիւն չունի իր անձին համար:

Վաղը. — Աշխարհ մը ուր ոչ մէկ արարած ոտք կոխած չէ տակաւին:

Երէկ. — Պարպուած քաղաք մը զոր Աստուած անգամ կարող եղած չէ դարձեալ լեցնել մինչև այսօր:

Աշխատութիւն. — Աստուծոյ օրհնեալ անէծքը ուղեալ առ մարդն:

Մոլորութիւն. — Հաճելի հիւանդութիւն:

Ուսուցչութիւն. — Յաւատ անհարակներուն պատառը մեր մէջ:

Քահանայութիւն. — Ուսուցչութեան նոյնը:

Խ. Գ. Լ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

Կալացի Արժ. Տ. Ղեւոնդ Քահանայի 1901 տարւոյ ընդարձակ օրացոյցը, նախորդ տարիներէ աւելի շահեկան ու հետաքրքրաշարժ տեղեկութիւններով: Դիմել յօրինողին, ի Կալաց (Ռուսաստան) և կամ Ա. Զարպհանէլեան գրատունը ի Վառնա: Դրամի փոխարէն նամակագրոյմ ալ կ'ընդունուի:

2—3

Ծ Ի Ծ Ա Ղ

Անցած օր տիկին մը՝ հայ նպարավաճառի մը աշակերտին կը հարցունէր.

— Ծօ՛ իս նայէ, թահինը քանի՞ կուտաք կոր.

— Բիւրն վեց զրուշի.

— Վայ գլխուդ, միսին օխան Յի կուտան կոր.

— Միսը ուրիշ, թահինը ուրիշ. պահք օրով միս կ'ուտեն.

— Ինչո՞ւ չպիտի ուտեմ. թող աժան ըլլայ տէ՛ ի՞նչ ընեմ, քիչ մըն ալ դժօխք կ'երթամ:

Ընկերութեան մը մէջ անձի մը վրայ կը խօսէին. անոնցմէ մէկը յանկարծ տան տիկնոջ դռնալով կըսէ.

— Տիկին, կարծեմ ձեր մանկութեան բարեկամահին եղած է տիկին Հրաբիր. հետեւաբար դուք ալ անոր տարիքը ունիք:

Տիկինը (Սրտմտելով) — Փառք Աստուծոյ, անիկա իմ տարիքս ունի, բայց ես ոչ տակաւին իրենը:

Հարս ու կեսուր

Կեսուրը. — Ինծի սանկ նանկ կըսես ամա, նայէ՛, խանաւոր խուշերը պիլէ վրաս խենդ կելլան կոր. տուչի օրը պախճան լաթ փռած ատենա առը մը ինծի չիչէք գիտցաւ տէ զօռլու մը խածաւ:

Հարսը — Պօչ տեղը սիրտդ թունդ հանելով մի՛ հպարտանար. քեզ խածնողը սաղլամ է... առսի բլլալու է, չիւնքիւ ձմեռուան մէջ չիչէք առսի չի գտնուիր:

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ԲՈԺՈԺԻԿԻ

1900րդ տարին ալ վերջապէս իր վերջին շունչը փչեց: Օրերը ձեղի:

Այս միջոցիս հաշուեյարդարութեան մէջ ենք. թողունք որ կարգ մը վաճառականներ խղջոր-խաղայ իրենց հաշիւները գոցեն, թողունք որ կարգ մը սեղանաւորներ իրենց տետրակները ձեռի, պիլիւնի բերեն, թողունք որ կարգ մը էսնաֆ խանութպաններ մէջէն չեւլուելիք իրենց պահանջի տետրակներուն խորերը թաղուին, վերջապէս թողունք որ արտաքսմանի մէկ քանի տեղերու կարգ մը խմբագիրներ իրարու ձեռքէ բաժանորդ խելու համար քիւտնէրով պոչաւաններ նետեն, մենք, ըստ մեր պարտականութեան ներկայ տարիին մէջ տեսնելիք կամ լսելիքներնիս հիմաւուց ներկայացնենք ընթերցողաց:

Նախ և առաջ ամենայն անկեղծութեամբ և սրտի հանգարտութեամբ կըսեմ թէ տարեթիւերնուս երկու ծայրերը կոթաւոր ըլլալուն պատճառաւ այս տարին շատերուս համար քիչ մը կոթ

պիտի գայ. մաղթենք միտն որ այս կոթը թեթեւ կամ ըարակ տեսակէն ըլլայ:

Այս տարի պիտի ունենանք մասնաւոր վարժարաններ, որոնք ճնշեալագիտէն կառավարութիւնն պատճառաւ... շրջանաւարտ պիտի ելլեն իրենց աշակերտներուն հետ:

Պիտի ունենանք դէմը ելլող բարեկամին «սոսական չեմ առներ կոր» ըսող, բայց առածը օրուան մէջ պիտի աւանակ լինելու ետքը անկէ ասկէ քաջեք մը թիւթիւնիւ փարա իսթիգրազ ընող մէկէ աւելի վարժապետներ:

«Եթէ 500 ֆրանք չի շրկէք, այս տարի չը պիտի կրնամ ֆլաւը փոխել ըսելով, խեղճ ծնողքէն քաջած նոյն գումարը ֆաբէ շանքաւաններու մէջ լինելու ետքը աննշան պանդոկներու մէջ պօղազ քոզուդուա մշակութիւն ընող սօքթօնցու էթիւտիէններ:

Պիտի տեսնենք ուշախներնուն ձեռքովը Պոլսոյ թերթերուն մէջ ինքզինքնին գովաբանել տուող արտաքսմանեան մէկ քանի թաղական անդամներ:

Պիտի տեսնենք իշխանութեան խարար տուող սիլիսիսի գլխարկով սօքթօններ:

Պիտի ունենանք կարգ մը յօկոյ խմբագիրներ, որոնք իրենց գրած անլի, անկապ ու սնամէջ յօդուածներուն մէջէն չկրնալով դուրս ելնել «օգնութիւն ինձ ի տեսնէ եկեցեք» պիտի պոռան:

Պիտի տեսնենք 2-3 ոսկինոց խօսք-կապով մը նշանածներուն ոտքը տարիներով կապելէ ու անոնց օժիտը պատրաստելու համար բաւական ծախքեր ընել տալէ ետքը նշանածներնին լքող... սրկականեր:

Պիտի տեսնենք բարոյականին տեղը կարգ մը պարոնտատներ, որոնք իրենց ամուսնացեալ որդւոց առնարական գործի պատճառաւ բացակայութենէն օգտուելով հարսերնուն հետ սիրահարութիւն ընեն ու դուռ դրացիներուն քով խայտառակուին:

(Շար.)

Կուզէ՞ք բերնի համով ապուխտ և երջիկ ուտել, գիմեցէք ի Մուսալլա Տ. Ագրի Մ. Կիւմիւշճեանի նպարավաճառատունը, ուր չափաւոր գիներով կը ծախուին առաջնակարգ մասնագետի մը ձեռքով պատրաստուած այս երկու տեսակ աղանդեղէնները:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (1)

ՈՐՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐԺԻՐ-ՄԱՄՈՒՆԵ)

ՄԱՍՆ Ա.

ՋՈՒՐԻ ԳԱԹԻԼ ՄԸ

Ա.

Պարոն Լեւոնի ամուսնութիւնը

Գիշեր եղած էր. Մարգարիտներու գետակն ահօսող բոլոր երկիրներուն շէնքերը այլ եւս ուրուային ըստուերներու պէս կ'երեւային ջուրէն բարձրացող մշուշին մէջ, տօթակէջ օրէ մը ետք. թռչունները կ'երգէին իւրիկնց հուսկ յետին երգերը. շուշանները կը փակէին ընկնց շափաղները. կոկոռները կը խնարհէին իրենց ձօղուններուն վրայ, ջուրերուն վրայ տարածուելով, կարծես իրենք ալ հնազանդելու համար մեհեանին ծնծղաներուն, որք իրիկուան տղօթքը հնչած էին և ըսած թէ հանգիստի պահն հասած էր:

Սակայն, այս մեծ գետին աջ եղերքին վրայ, հաղորդակցութեան միակ միջոցը Մաքսօի և Քանդոնի միջեւ, վիլա մը, լի ոգեւորութեամբ և լոյսերով, կատարեալ հակապատկեր մը կը ներկայացնէր շրջակայքը տիրող լուծեան և հանդարտութեան հետ:

Նուագախումբ մը, որ կը բաղկանար հարիւրի չափ երաժիշտներէ, հետուն կը զրկէր իր զուարթ խաղերը զորս արձագանգները կը կրկնէին. գունաւոր բազմաթիւ լապտերներ գիւթական երեւոյթ մը կուտային փառաւոր պարտէզներուն որոցմով շրջապատուած էր շէնքը, և հըրախազութիւններուն անգագրում պայթիւնները, որոնք, իրենց լուսահետ ահօսները գծելէ ետք աստեղազուրկ իրիկներին մէջ, կ'իյնային բրինձի արտերուն մէջտեղ, կ'արթնցունէին կապոյտ խոշոր աղաւնիներու անթիւ զոյգեր որք խոյս կուտային արագասահ:

Այս վիլա բնակարանն էր երիտասարդ Լէնկ-Թաւանի, որ կը նշանակէ՝ Լէնկ անդրանիկ զաւակ: Նոյն սրը ամուսնացած էր, և այս բարեբաւտ գէպքին առթիւ տուած հանգէսը կարծես չէր վերջանար:

Ոչ որ կը մտածէր մեկնիլ. դրօշազարդ մակոյկները և փահաւորակները որք քաղաք պիտի տանէին հարսնեւորները, դեռ երկար ատեն պիտիսպասէին անոնց, հակառակ այն բնական անհամբերութեան զոր Լէնկ կը ըզգար իր հիւրերէն բաժնուելու համար, որպէս զի իր հարսանեկան սենեակին մէջ միանայ անոր որ իր կինն էր և որուն գէմքն իսկ չէր տեսած, ինչպէս որ ան ալ իր ամուսինին երեսը չէր տեսած:

Վասն զի երկնային կայսրութեան մէջ իրերն այսպէս տեղի կուենան, եւ չեմ կարծեր որ ընտանիքներն աւելի յոռի ըլլան քան մեր երկիրներուն մէջ: Հոն, ամուսինները այն ատեն միայն զիրար կը տեսնեն, երբ անդարձ կերպով միացած են:

Լէնկ գիտէր միայն թէ իր մանկամարդ կինը Սօլ-Պրօտէ կը կոչուէր և թէ ասանամեայ տղայ մը չպիտի կրէար հագնիլ անոր վարդապոյն անդուսէ կօշիկները:

Փեսին հայրը, Լէնկ-Թիէն-Լօ-Պատիւ՝ երկնի-Քանդոնի ամուսնէն հարուստ վաճառականներէն մէկը, իրիկուն մը ըսած էր իր ժառանգորդին թէ այլ եւո ժամանակ էր վերջ տալու դիւրին հաճոյքներուն և թէ ինք գտած էր կին մը որ իր վրայ կը միացունէր ամեն յատկութիւններ և ամեն հրապոյրներ:

Չաւակը հանդարտած էր. վասն զի, Չինաստանի մէջ, ծնողաց նկատմամբ յարգանքի պակասութիւնը խրատիւ կը պատժուի. անմիջապէս իր խօսեցեալին հետ փոխանակած էր սովորական ընծաները և երեք ամիս ետքը, աւտուկ իսկ այն օրուան ուր կը սկսի այս վէպը, իր գրան առջև տեսած էր ժամանուամի ծիրանեփայտէ գեղեցիկ փահաւորակի մը որ փղոսկրով դրուագուած էր:

Անկից դուրս ելած էր ոսկեհիւս և արծաթազարդ մուսլինէ թանձր ու երկար շղարշներու մէջ խնամով փաթթուած այն կինը որ այնուհետեւ իր ընկերուհին պիտի ըլլար, բայց չէր կրնար ոչ խօսք ուղղել անոր, ոչ իսկ ինքզինքը ծանօթացունել: Անոր աղախինները շուտով քաշած տարած էին զինքը՝ իրեն սահմանուած սենեկին մէջ փակելու համար:

Լէնկ մխիթարուած էր այս հարուածէն, յիշելով որ այդ սենեակը զարդարուած էր բոլոր երեւոյթների պերճանքով, և թէ իւրաքանչիւրն այդ առարկաներուն որոյ վրայ Սօլ-Պրօտէ պիտի յառէր իր ակնարկը, ամուսնին սէրը պիտի արտայայտէր:

Յետոյ ալ միայն հանդէսով զբաղած էր, հանգէս՝ որուն կը մասնակցէին բազմաթիւ օտարականներ, մինչ իր հայրը մէկ քանի մտերիմներ կ'ընդունէր իր հարսին յարկարաժնին մէջ: Ասպնջականութեան օրէնքները գոհացնելու համար, տան դռները առտուընէ ի վեր բացուած էին ամեն անոնց որ ուզէին սեմէն ներս անցնիլ:

Բաղմաթիւ մարդեր կային հոն զորս երիտասարդ լէնկ երբէք տեսած չէր, այլ որոց բաժակաճառերուն պարտաւորած էր այնքան յաճախ պատասխանել որ արեւածուտին գլուխը ջախաջխուած էր և ալ միայն կրցածին չափ շուտ փախչելուն վրայ կը մտածէր, պարտեղին մէջ օդ տոնելու համար:

Աստահ էր որ հրաւիրեալները պիտի խոնուէին վիշախն մեծ սրահին մէջ երբ լարախաղացները զորո քանթոնէն բերել տուած էր, սկսէին իրենց մարգանքները, և անհամբերութեամբ կը սպասէր որ այդ ժամն հնչէ, այլ եւս զրէթէ մտիկ չընելով նուագախումբին հատուածները եւ մեքենաբար միայն պատասխանելով իրեն ուղղուած շնորհաւորութիւններուն:

Եւթէ նուազ մտադիր ըլլար, անշուշտ պիտի նշմարէր իր հիւր երէն երկուքը, որոց ակնարկները շատ անգամ իր վրայ կը յառէին տարբեր արտայայտութիւններով եւ որք բնաւ չէին մտնակցելու ընդհանուր ուրախութեան:

Մէկը երիտասարդ մըն էր տփռուեալէմ, մեղամաղձոտ ու խստերանգ գիմագծութեամբ:

Իր հագուստէն և իր գլխարկին վրայի պղինձէ կոճակէն դիւրին էր հասկնալ թէ անիկա քօի մեհնանին մէկ գրագէտն էր:

Հարսին գահաւորակին հետ մտած էր վիշախ. նայուածքովն հետեւած էր անոր մինչեւ որ յարկաբաժնին գուռները ետեւէն գոցուած էին. յետոյ ամբողջին խառնուած էր, ոտանց մասնակցելու անոր խաղերուն, ու թէեւ քանիցս ուղղուած էր դէպ ի դուռը, միշտ ետ դարձած էր, կարծես անգիմադրելի ձգողութեամբ մը հոն կապուելով:

Օրուան մէջ տասն անգամ լէնկ-թա-լանկ որ կը ծանշնար դայն, բարեկամական ժպիտով մը բարեւած էր եւ երիտասարդ գիտունը պատասխանած էր տաժանելի ծիգով մը եւ ցաւագին նեղսրտութեամբ մը որ Սօլ-Պըրոտէի ամուսնէն նուազ կուրօքէն երջանիկ ամեն մարդու աչքին պիտի զարնէր:

Գալով երկրորդ անձին, որուն կերպարանքն ալ չէր համապատասխաներ վիշախն զուարթ հիւրերուն կերպարանքին, երեսուննոց մարդ մըն էր նիհար, բարձրահասակ եւ գոհհիկ երեւոյթով, թէեւ պերճօրէն, հարուստ վաճառականի մը պէս հագուած ըլլար:

Իր խոշոր կլոր աչքերը, ճակտին վերելը, արինաւցայտ, մաքնիսական սեւեռուով նայուածքներ ունէին եւ իր կարմիր ու թանձր շուրթերը, հեգնական ժպիտով մը միշտ բաց, իրեն կ'ընծայէին միանգամայն կոշտ ու անասնական երեւոյթ մը:

Իր գիմագծերն անգամ մը տեսնելէ ետք, ալ անկարելի էր զանոնք մոռնալ:

Այս տարօրինակ արարածը գիշերը վրայ հասնելուն եկած էր անշուշտ, վասն զի տանեմները նշմարած չէին զայն: Իրաւ է որ գիշերուան մեծ մասը դարաստանին մէջ անցուցած էր:

Կարծես այդ տունն եկած էր միմիայն պարտեղին ծառուղիները համբելու եւ թաւուտները քննելու համար:
(Շարունակելի)

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

1901 Յունվ. 7 Կիրակի գիշեր ժամ 8 ուկէս

Ի Ն Պ Ա Ս Տ

Նովա Զվեսա Հայ Դերս. խմբին

ԲԱՏՈՒԱՅԻ ԲՈՒՆԱԻՈՐԸ

Թատրերդ. 5 արար վիկթոր Հիւկօյի

ԶԱԽԵՇՏ 1 Արար

Ա. Կարգ 2 Փր. Բ. Կարգ 1 Փր. Կարգի 50 Սնդ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԳԻՐԲ ՅՐԱՆՍՈՀԱՅ

Պատկերազարդ

Հաստի Աւաջին A—B

Սոյն բառգիրքը որ Ն. Ա. Բարձր. Իշխան Լուսինեանի երկար տարիներէ ի վեր կատարած ուսումնասիրութեանց արդիւնքը կը ներկայացնէ, այս անգամ հրապարակ ելած է 1061 երեսներէ բաղկացեալ: Սա իր տեսակին մէջ առաջինն է, որովհետեւ գիտական, բուսական, ճարտարապետական, բժշկական և այլ ամեն տեսակ անհամար բառեր պարունակելով, անոնց այլ եւ այլ իմաստները կը սորվեցնէ ոճերու մանրամասն բացատրութեամբ և գեղեցիկ պատկերներով: Ֆրանսերէն և Հայերէն լեզուներուն միանգամայն ծանօթանալ ու գործնործելու համար անհրաժեշտ պէտք մըն է այս: Ամբողջ գործը երկու հատորէ պիտի բաղկանայ: Ա. հատորի թղթակազմին գինն է 25 Փրանք: Պուլկարիոյ և Ռուսմանիոյ մէջ ստանալ փափագողները պէտք է գիմեն «Հայերի» խմբագրութեան:

Печатница „Взаимность“ — Варна.